ԻՐԱԿԱՆԱՑԱՎ ՄԵՐ ԵՐԱԶԸ

Ակադեմիկոս **ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ**

Ամեն տարի տոնում ենք մենք այս օրը: Այս օրը մենք հանդիսադիմարի ենք բերում այն բոլոր բարիքները, որ մենք վայելել ենք ու վայելում ենք շնորհիվ մեր Սովետական իշխանության:

Իհարկե ամեն մի առաջադիմական քայլ ուրախացնում է մեր սիրտը, ինչքան էլ փոքր ու աննշան լինի նա:

Բայց ի՞նչ պիտի ասենք այժմ, երբ մեր առաջ տեղի ունեցավ մեր կուլտուրական ամենամեծ երևույթներից մեկը, մի երևույթ, որին սպասում էր ամբողջ ազգը այսքան դարերի ընթացքում:

Դա մեր Հայկական Ակադեմիայի բացումն է: Հայկական Ակադեմիան հայ մտավորականության դարավոր երազն էր: Այդ երազը իրականություն ստացավ այժմ միայն շնորհիվ Սովետական իշխանության:

Երկու կարևոր կետ է մատնանիշ անում Հայկական Ակադեմիայի բացումը: Առաջինն այն է, որ նա ցույց է տալիս, թե ուրեմն մեր մտավոր մակարդակը այնքան է բարձրացել, որ մենք արժանի ենք եղել նրան: Եվ արդարև մեծ քաղաքներից սկսած մինչև վերջին դյուղը բացված դպրոցները, այդ դպրոցներում սովորող հարյուր հազարավոր աշակերտները, միջնակարգ ու բարձրագույն զանազան տիպի դպրոցներն ավարտած ուսանողները, այդ դպրոցներում պաշտոնավարող և արդեն մեծ փորձառություն ու հմտություն ձեռք բերած դասախոսները, պրոֆեսորները, դոկտորները և այլն— ապացույց են դրան:

Երկրորդ կետը մեր Սովետական կառավարության ուշադրությունը և վերաբերմունքն է: Ցարական իշխանությունը ոչ միայն չէր քաջալերում ժողովրդի մտավոր առաջադիմական քայլերը, այլև ամեն կերպ աշխատում էր արգելակել, խոչընդոտ դառնալ նրան: Դրա համար նա փակում էր համալսարանների դռները աղքատ դյուղացիների և մանավանդ «ոչ-ուղղափառ» հպատակների առաջ: Սովետական իշխանությունը ոչ միայն ամեն կերպ նպաստեց բոլոր խավերի և բոլոր ժողովուրդների ուսումնական-կրթական գործին, այլև նրանց համալսարաններ, այլև այսօր ահա շնորհում է մեզ սեփական Ակադեմիա, ազատ ասպարեզ կարդալով գիտության բոլոր ճյուղերի մեջ առաջադիմելու: Եվ այդ այս ահավոր օրերին, երբ վերմանա-ֆաշիստական հորդաները ողողել էին ուղում մեր սրբազան հայրենիքը, նպատակ ունենալով ոչնչացնել ամեն գիտական ու կուլտուրական նվաճում: Մեր երկրի ամբողջ ժողովուրդը ոտի է կանգնել և քայլ առ քայլ դուրս է վանում թշնամուն մեր հողից: Մոտ է վերջնական հաղթանակը: Սովետական իշխանությունը ահա նույնիսկ այս դժվարին օրերին իրականություն դարձրեց մեր երազը: Դա նշան է ոչ միայն իր ժողովրդասեր և ուսումնասեր վերաբերմունքին, այլև նշան է իր առանձին ուշադրության:

Ի տես այս բոլորի, այս տոնական դեղեցիկ օրը, մենք չենք կարող սրտի խորքից չդոչել՝

Կեցցե՞ մեր Սովետական իշխանությունը:

Կեցցե՞ մեր Սովետական իշխանության ղեկավարը և առաջնորդ, Մարշալ ընկեր Ստալինը: